

Արձանագրություն թիվ 4

26 նոյեմբերի 2014թ.

ք.Իջևան

Նախագահ՝ Ա.Շ.Մարգարյան

Քարտուղար՝ Ա.Ռ.Մելքունյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 10 անդամներ: Հրավիրվել էին նաև ամբիոնների դասախոսներ:

ՕՐԱԿԱՐԳ

1. Երկրորդ ընթացիկ քննությունների և ստուգումների գրաֆիկների հաստատում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան/

2. 2014-15թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկի հաստատում:

/զեկ. Ա.Շ.Մարգարյան /

3. Ընթացիկ հարցեր:

ԼՄԵՑԻՆ - Ֆակուլտետի խորհրդի նիստը բացեց և օրակարգը ներկայացրեց դեկանի Ժ/պ, խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկաներին տեղեկացրեց, որ ըստ ֆակուլտետի խորհրդի հաստատված աշխատանքային պլանի հերթական նիստին նախատեսված էր երկու հարց: Սակայն կապված ուսումնական պրոցեսի արդյունավետ կազմակերպման անհրաժեշտությունից ավելացվել է ևս մեկ հարց:

Օրակարգը հաստատելուց հետո նիստի մասնակիցները անցան օրակարգի հարցերի քննարկմանը:

Նիստը վարում էր Ա.Շ.Մարգարյանը:

Օրակարգի առաջին հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը և նշեց, որ վերջինս քննարկվել է նաև ուսանողների շրջանում: Անցկացվեց ընդանուր քննարկում և առաջարկվեց հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - 2014-15թթ. ուստարվա I կիսամյակի II ընթացիկ քննությունների և ստուգումների ժամանակացույցը ներկայացնել տնօրենություն հաստատելու այն:

Օրակարգի երկրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը և ըստ մասնագիտությունների ներկայացրեց 2014-15թթ. ուստարվա առաջին կիսամյակի ստուգարքային շրջանի, քննաշրջանի և կոնսուլտացիաների ժամանակացույցը՝ 15.12.2014թ.-24.01.2015թ., որը կազմվել է համաձայն ուսումնական պլանի: Նա ընգծեց, որ մանրամասնորեն քննարկվել և որոշվել է եզրափակիչ և առանց եզրափակիչ գնահատմամբ յուրաքանչյուր առարկայի քննությունների և ստուգարքների անցկացման ձևը(գրավոր, բանավոր,թեստային) և հարցատուսի նմուշները:

Զեկուցողը հանձնարարեց ամբիոններին վերանայել հարցաշարերը, քննական տոմսերը կազմել նոր որոշումների համաձայն և քննաշրջանը կազմակերպել ըստ հաստատված ժամանակացույցի, իսկ դեկանատին՝ սահմանել հսկողություն քննաշրջանը անցկացնել համաձայն համապատասխան կարգի:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Մ.Մելքումյանը, Մ.Ստեփանյանը,Ա.Զիրուխյանը: Նրանք համակարծիք էին ներկայացված նյութին և առաջարկեցին հաստատել:

ՈՐՈՇԵՑԻՆ - Ներկայացնել տնօրենություն հաստատելու 2014-15թթ. ուստարվա առաջին կիսամյակի քննաշրջանի գրաֆիկը:

Օրակարգի երրորդ հարցի մասին հանդես եկավ խորհրդի նախագահ Ա.Շ.Մարգարյանը: Նա ներկայացրեց ֆակուլտետի որոշ կարգապահական հարցեր ,ուսանողների դասերին հաճախումների արդյունքները:Նա ներկայացրեց այն ուսանողներին,որոնք ունեն 30-ից ավելի բացականեր և դեկանատի կողմից ստացել են նկատողություն և այն ուսանողներին, որոնք ունեն 60-ից ավելի անհարգելի բացականեր և ներկայացվել են տնօրենի կողմից խիստ նկատողություն ստանալու: Ա.Շ.Մարգարյանը մտահոգություն արտահայտեց այն մասին,որ նշված բոլոր ուսանողները „Կիրառական արվեստի,, երրորդ կուրսի ուսանողներ են:

Զեկուցողը հանձնարարեց ,որ երրորդ կուրսի ուսանողներ Հովսեփ Ասիլյանին, Դավիթ Մեջինյանին, Դերենիկ Ստեփանյանի նորից տեղեկացնել որ ներկայացվել են տնօրենի կողմից խիստ նկատողության, իսկ Արայիկ Ճաղարյանին,Վարուժան Սարհատյանին,Արզամ Միմոնյանին՝ դեկանի կողմից նկատողության:
ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Հ.Միրզոյանը, Ա.Զիրուխյանը, Դ.Զիրուխյանը և Ս.Հովհաննիսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ –Դեկանատի և ուսումնական խորհրդատուի հետ համատեղ դեկտեմբեր ամսվա ընթացքում ուշադրություն դարձնել հատկապես երրորդ կուրսի ուսանողների հաճախումներին և կարգապահական հարցերին:

ՆԱԽԱԳԱՀ
ՔԱՐՏՈՒՂԱՐ

Ա. Շ.Մարգարյան
Ա.Ռ.Մելքումյան